№ 27 Շաբաթ Մարտի 8 — 1886 — Շաբաթ Մարտի 8 № 27

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ».

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ՆԵՐԿԱՑ 1886 ԹԻՒՆ

Հրատարակվում է Թիֆլիսում, շաբաթը երեք անգամ, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մեկը առանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, տան և մէկ ամսվանը 9 ռուբլ, վեց ամսվանը 6 ռուբլ։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ և պ. ՇԱՎԵՐԴՈՎԻ պավիլիօնում։ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ գտնվում է Բաթօնակի և Բազարնի փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը, № 12 բնակարանում։ Ուղղակի մուտքը Բազարնի փողոցից է, Բէմէկէնտայա Ուլիցայի դիմաց։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ «Մշակին» գրվելով կարելի է վճարել 25 ֆրանկանոց թղթադրամով։

Թիֆլիսում «ՄՇԱԿԻ» համարները հատով ծախվում են 7 կոպէկով պ. ՇԱՎԵՐԴՈՎԻ պավիլիօնում, պ. ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ծխախոտի մագազինում (Կովկաս հիւրանոցի տակ) և պ. ԱԼԻԽԱՆՈՎԻ ծխախոտի մագազինում (Վօրոնցովի արձանի դիմաց)։

Յայտարարութիւնները, ամեն լեզուներով, ընդունվում են ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ և պ. ՇԱՎԵՐԴՈՎԻ մօտ։ Յայտարարութիւնների իւրաքանչիւր բառին վճարվում է 2 կոպէկ։

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ, բաց է ամեն օր, առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ, իսկ կիրակի օրերը առաւօտեան 10—12 ժամ։

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Հասցէն փոխելու ժամանակ պէտք է ուղարկել խմբագրութեանը 28 կոպէկ կամ 4 հատ 7 կոպէկանոց փոստային մարկա։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վաղվայ ընտրութիւններ։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Աբգինիայից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Պարսկաստանից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ՖԵԼԻԵՏՕՆ։ Տեղեկութիւններ Թիւրքիայից և Թիւրքաց Հայաստանից։

ՎԱՂՎԱՑ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Ինչպէս յայտնի է, վաղը, կիրակի օր, հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ Թիֆլիսի բոլոր հայոց եկեղեցիներում պիտի կատարվեն ընտրութիւններ եկեղեցական պատգամաւորների, որոնք իրանց կողմից պիտի ընտրեն Թիֆլիսի Ներսիսեան դպրանոցի համար հոգաբարձուներ։

Ներսիսեան դպրանոցի համար հոգաբարձուների աջող կամ անաջող ընտրութիւնը կախված է եկեղեցական պատգամաւորների այդ սկզբնական աջող կամ անաջող ընտրութիւնից։ Ուրեմն եթէ ժողովուրդը կամենում է որ Ներսիսեան դպրոցն ունենայ օրինաւոր հոգաբարձուներ, ծխական ընտրողները պէտք է շատ մեծ զգուշութեամբ վերաբերվեն և դէպի եկեղեցական պատգամաւորների ընտրութիւնը։

Այս տեսակ դիպուածներում քարոզել բոլոր մասնակցողները աչքի առաջ ունեն։ Այդտեղ անձնական շահերն էլ մեծ դեր են խաղում։

Հոգևոր իշխանութիւնը, բնականաբար և շատ հասկանալի պատճառներով, կաշխատի միշտ ընտրել տալ այնպիսի հոգաբարձուներ, որոնք իրան հաճելի են։ Մասնաւոր անհատներ կաշխատեն միշտ ընտրել տալ այնպիսի անձանց, որոնց հետ որ և է շահասիրական կապեր ունեն։ Վերջապէս, շատերը իրանք էլ կաշխատեն իրանց անձը ընտրել տալ, շատ անգամ ոչ թէ ազգի օգուտը աչքի առաջ ունենալու, դպրոցական հասատութեանը անշահասիրական կերպով ծառայելու, և նրա օգտին իրանց ամբողջ բարոյական և մտաւոր ոյժերը նուիրելու նպատակով (այդ տեսակ իդէալիստներ, կամ ինչպէս մեզ մօտ „տխմարներ" են անուանվում, շատ հազւագիւտ են) այլ աչքի առաջ ունելով և բուն անձնական շահասիրական նպատակներ։

Ճշմարիտ է, Ներսիսեան դպրոցի հոգաբարձուն ռոճիկ չէ ստանում։ բայց միթէ քիչ են ուրիշ օգուտներ, որ կարելի է քաղել հոգաբարձու դառնալով։ Նախ՝ անունը, դիրքը հասարակութեան մէջ, որ ցոյց է տալիս թէ հասարակութիւնը ձեզ յարգում է, ձեզանից կախված է, ձեր մէջ պէտք ունի (և այդ դիրքից ժամանակով շատ ուրիշ օգուտներ կարելի է քաղել)։ Երկրորդ՝ հոգաբարձու դառնալով կարելի է իր չքաւոր, և որ գլխաւորն է, ուրիշ ոչ մի տեղ իր անընդունակութեան պատճառով գործ չը գտնող ազգականին ուսուցչի կամ վերակացուի պաշտօն ճարել դպրոցի մէջ, և այլն. . .

Անցնենք նոյն իսկ ընտրութեան ձևին։ Արդէն մեր եկեղեցական ընտրութիւնների ձևը սխալ և անկանոն է և միջոց է տալիս իր անկանոնութեամբ նոյն իսկ այն բոլոր անհատներին աջողութիւն ունենալու, որոնք անձնական նպատակներին ձգտելով, ծածկում են իրանց երեսը հասարակաց օգտի կեղծ դիմակով։

ՖԵԼԻԵՏՕՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ ԵՒ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Սերովբէ Կիւլպէնկեանի մահը.—Վանի ցուրտը.—Թիւրքաց զօրքի զգեստների համար հանգանակութիւն.—Մկրտիչ Թէրլէմեզեան.—Դիարբէքիրի Յովսէփ Գաղազեան.—Գրիգոր էֆէնդի Օտեանի հիւանդութիւնը.—Բօբէրտեան վարժարան.—Հայ-Ասորւոց վարժարան Կ. Պոլսում.—Վանի առաջնորդ Պօղոս սրբազանը.—Հայերի կրօնափոխութիւնը.—Յովհաննէս Սպարթալեան.—Հրէայ հնավաճառի գործը.—Նարլը-Գարուի վարժարանը։

—

Քաղում ենք հետևեալ տեղեկութիւններ Կ. Պոլսի թէ հայոց և թէ եւրօպական լրագիրներից։ Կ. Պոլսում այս օրերս վախճանված Սերովբէ Կիւլպէնկեանի մասին ահա ինչ ենք կարդում հայոց լրագիրներում։ Նա ծնվեցաւ 1833 թվին Կեսարիայի Թալաս քաղաքում։ 1847 թվին նա Էրզրումի մէջ առևտրական գործերով սկսեց զբաղվել և շուտով Փոքր-Ասիայի հետ ամենամեծ վաճառականութիւն անող առևտրական տան պետ եղաւ իր ընդունակութեան շնորհով։ Սերովբէ էֆէնդին ունէր մի քանի թիւրքաց պատուանշաններ և անդամ էր Կ. Պոլսի Առևտրական ատեանի։ 1874 թ. նա Էնկիւրիի սովելոց յանձնախմբի անդամ եղաւ, իսկ 1880 թ. ատենապետ Հայաստանի սովելոց կենտրոնական յանձնաժողովի։ 1869 թ. նշանակվեցաւ անդամ կենտրոնական վարչութեան խառն ժողովի, և 1878 թվից սկսած անդամ էր ազգային Հիւանդանոցի հոգաբարձութեան։ Նոյնպէս անդամ էր նա Երուսաղէմի պարտքերի բարձման յանձնաժողովի, ատենապետ Գասը-գիւղի Թաղական խորհրդի, անդամ Իւսկիւտարիի Ս. Խաչի Թաղական խորհրդի։ Իր եղբայր Սարգիս էֆէնդիի հետ նա հիմնել էր Թալասի օրիորդաց վարժարանը, որի մէջ ուսանում էին 100-ից աւելի աշակերտուհիք և քսան տարի շարունակ հոգում էր այդ հաստատութեան ծախսերի մասին, նոյնպէս և Թալասի արական վարժարանի մասին, որ իր հայրն էր հիմնել, հոգատարութիւն էր անում։ Կիւլպէնկեան վախճանվեց 53 տարեկան հասակում, երբ դեռ կարող էր գործել։ Հանգուցեալը անդամ էր Քաղաքական ժողովի։ Զը մոռանանք յիշել որ ի նպաստ սովելոց հանգանակված գումարից, սովը անցնելուց յետոյ, մնացել էր յանձնաժողովի ձեռքում 6500 ոսկու չափ գումար, որով Սերովբէ էֆէնդին գնեց Կ. Պոլսի Թիճարէթ-խանը, որի եկամուտը գործ է դրվում այլ և այլ բարեգործական նպատակներին։ Իր կեանքի ժամանակ Ս. Փրկչի որբանոցի և հիւանդանոցի մասին հոգալով, ասում են որ հանգուցեալը մի կտակ թողեց, որով պարտաւորեցնում է իր ժառանգներին միանուագ քանի մի հազար ոսկի նուիրել ի նպաստ վերաշինութեան հիւանդանոցի։ Կիւլպէնկեանի հանդիսաւոր կերպով կատարած յուղարկաւորութիւնից յետոյ, թէ Կ. Պոլսում, թէ Վանում, թէ Էրզրումի մէջ և այլ քաղաքներում հայերը նրա յիշատակին հոգեհանգիստներ կատարեցին։ Ոչ թէ միայն հայերը և հայ հոգևորականութիւնը ցաւակցական հեռագիրներ ուղարկեցին հանգուցեալի ընտանիքին, բայց և նոյն իսկ ասորւոց Կաթողիկոսն իր փոխանորդի միջոցով հեռաւոր ցաւակցական հեռագիր ուղարկեց Կիւլպէնկեանի ընտանիքին։ «Կիւլպէնկեան Սերովբէ էֆէնդիի մահը մեծ կորուստ է, որի համար մեր ս. Պատրիարքը ասորւոց ամբողջ ազգի անունով ցաւակցութիւն է յայտնում Կիւլպէնկեան ընտանիքին։ Հանգուցեալի հոգու համար աղօթքներ են կատարվում։»

* * *

Այժմ անցնենք ուրիշ լուրերին։ Այս տարի Վանի մէջ ցուրտը անսովոր էր. Ցելգիի ջերմաչափը զրօից 15 աստիճան իջաւ։ Եթէ ձմեռը այդպէս շարունակվի, մեծ վնասներ կը տայ երկրագործութեանը։

* * *

Թիւրքաց Հայաստանի ամեն դասակարգի բնակիչներից հանգանակութիւն են հաւաքում Թիւրքաց զօրքի ձմերային զգեստներ հայթայթելու համար։ Վերջին ամիսներին բազմաթիւ զօրքեր հասած են Հայաստան, մասամբ Հէքեարից այդտեղ եկան։ Օրինակ Վանի նահանգի մէջ զօրքի թիւը 5000-ի է հասնում։

Քանի մի շաբաթ առաջ Վանի բանտից արձակվեցաւ Մկրտիչ Թէրլէմեզեան, որ, ինչպէս ասում են Կ. Պոլսի հայոց լրագիրները, մի քարտէզի համար բանտարկված էր, երեք ամսից աւելի։ Պատժական դատարանը, այժմ գործը քննելուց յետոյ, պատժելու արժանի բան չը գտնելով յիշեալ քարտէզի գծագրութեան մէջ, ազատեց բանտից երիտասարդին։

* * *

Քանի մի ժամանակ է արդէն, որ Կ. Պոլսի Թիւրք լրագիրները խօսում են դիարբէքիրցի Յովսէփ Գաղազեան հայ կաթոլիկի մասին, որ մեծ աղմուկներ է հանում Դիարբէքիրի մէջ և շատ անդամ ժողովրդի բողոքներին առիթ է տուել։ Ահա ինչ է գրում նրա մասին Կ. Պոլսի «Stamboul» ֆրանսիական թերթը։ Մարտինցի Յովսէփ Գաղազեան անունով մի անձ որ Դիարբէքիրումն է բնակվում, աղքատ ծնողների զաւակ էր, բայց մի քանի տարվայ ընթացքում կարողացաւ հարստանալ ամեն ներելի և աններելի միջոցներով։ Փոքր Ասիայի սովի ժամանակ, Յովսէփը, գնելով հացի մեծ քանակութիւն շատ էժան գներով, զանազան նիւթերի հետ էր խառնում ալիւրը և այդ տեսակ հացը սովատանջ ժողովրդին բարձր գներով էր վաճառում։ Այդ խարդախութիւնը նրա մեծ հարստութեան սկիզբն էր։ Տեղական պաշտօնեաներ, որոնք օգուտներ ունէին Գաղազեանից, անպատիժ էին թողնում նրան։ Հարստութեան հետ Գաղազեանի ազդեցութիւնն էլ երկրի մէջ հետզհետէ աւելանում էր, մանաւանդ իր որդու և եղբօր շնորհով, որոնք դատական իշխանութիւնների մէջ կարևոր դիրքեր էին գրաւած։ Այնուհետև խնդիր չը կար թէ մասնաւոր անձանց և թէ կառավարութեան ու մասնաւոր անձանց փոխադարձ յարաբերութիւնների մէջ, որտեղ Գաղազեան չընտրվեր միջնորդ դատաւոր։ Եւ նա, ի հարկէ, շատ հարցեր էր վճռում սրանից կամ նրանից դրամ պահանջելով և ով աւելի կը տար նրան, նա արդար էր հանդիսանում։ Ժողովուրդը անդադար բողոքում էր նամակներով, հեռագիրներով, խնդրագիրներով անընդհատ բողոքներ էր ուղարկում Կ. Պոլիս, բայց ոչինչ չէր օգնում։ Այսպիսով Գաղազեան մի տեսակ աստական պետ էր դարձել իր գաւառի մէջ։ Ժողովրդի զայրոյթին չափ չը կար։ Բայց ահա պ. Գաղազեան ինքն իրան վնասեց, ինքն իր ձեռքով մահացու հարուած տալով իր գործին։ Իր փառասիրութեան զգացմունքը յագեցնելու համար յանկարծ սկսեց զբաղվել և քաղաքական գործերով։ Այժմ, ինչպէս հաղորդում է վերև յիշված ֆրանսիական թերթը, ամրաստանված լինելով պետական դաւադրութեան մէջ մասնակցութիւն ունենալում, Գաղազեան ձերբակալվեցաւ և տարվեցաւ Կ. Պոլիս։ Ուրիշ կողմից Կ. Պոլսում հրատարակվող Թիւրքաց «Թարիդ» լրագիրը հաղորդում է որ Գաղազեանին դարձեալ աջողվեցաւ փախչել բանտից և

Եկեղեցու երեցփոխները և քահանաները, որոնք իրանք գանգատվում են, որ շատ անգամ այս կամ այն եկեղեցում ընտրողական ձայն են ստանում անձինք, որոնք նոյն եկեղեցու ծուխ կամ ժողովուրդ չեն,— երբ անպատճառ հարկաւոր է, որ իրանց ուղած կանդիդատն ընտրվի, իրանք ստորագրել են տալիս ընտրողական թերթը ուրիշ եկեղեցիների ժողովրդին և ծուխին պատկանող անձանց, որպէս զի շատ ստորագրողներ ունենան թերթի վրա։ Ինքն ընտրութիւնը լինում է մեծ մասամբ ոչ թէ քուէներով կամ տոմսակներով, այլ ընտրողների կողմից բերանացի յայտնած համաձայնութեամբ։

Դուք ծուխ էք, կամ ժողովուրդ էք մի եկեղեցու. մտնում էք եկեղեցի ընտրութեան համար նշանակված օրը։

„Պարոններ, մենք այդ թերթի վրա ունենք գրված ընտրելի անձանց անունները, կամենում էք ստորագրել“, դիմում է ձեզ անմիջապէս երեցփոխը կամ քահանան։

Դուք ձեզ թոյլ էք տալիս առարկել։

„Այստեղ չէ կարելի վիճաբանել, այստեղ եկեղեցի է“, պատասխանում է ձեզ երեցփոխը կամ քահանան։

—Ուրեմն տարէք մեզ եկեղեցու դաւթում գտնվող դպրոցական շինութիւնը, կամ, եթէ այդպիսինը չը կայ, գնանք հաւաքվենք մդդսու սենեակը ու այնտեղ ազատօրէն քուէներով և տոմսակներով ընտրութիւններ անենք, պատասխանում էք դուք։

Ոչ, այնտեղ չէ կարելի, ընտրութիւնները եկեղեցում պէտք կատարվեն. քուէներով և տոմսակներով նոյնպէս չէ կարելի, այլ բերանացի համաձայնութեամբ և անմիջապէս թերթի վրա ստորագրելով երեցփոխի կամ քահանայի ուզած կանդիդատների ընտրութիւնը։

Մի ուրիշ եկեղեցում քահանան ու երեցփոխը չեն թելադրողները, բայց թելադրողը հասարակութեան մէջ մի որ և է դիրք ունեցող, կապեր ունեցող, ընտրութեան մէջ իր անձնական շահ ունեցող, կամ ինքն ընտրվել ուզող, կամ իր հետ որ և է նիւթական կապ ունեցող ուրիշ մարդուն ընտրել ուզող անձն է։

Հարկաւոր է, որ վաղվայ ընտրութիւնները կատարվեն կանոնաւոր կերպով, իւրաքանչիւր եկեղեցու դաւթում գտնվող մի որ և է շինութեան դահլիճում, կամ եթէ նոյն իսկ եկեղեցում կատարվեն, պէտք է կանոնաւոր քուէարկութիւն կատարել, հաւաքված ձայները պէտք է հաշուել, արձանագրել և ոչ թէ թոյլ տալ որ բոլորը միասին կանչեն՝ „ընտրում ենք, ընտրում ենք“։ Ընտրողները քահանայից և երեցփոխից պէտք է պահանջեն, որ նախ քան ընտրութիւններին ձեռնարկեն, ունենան իրանց աչքի առջև նոյն եկեղեցու բոլոր ծխականների և ժողովրդի ճիշտ անուանական ցուցակը։

Մեր եկեղեցականները այն ստիճան անտիրտ են, որ ընտրութեան ժամանակ չեն էլ ներկայացնում, գուցէ չունեն էլ բոլոր իրանց ծխականների և ժողովրդականների ճիշտ անուանական ցուցակը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՐԳԻՆԱՑԻՑ

Փետրվարի 25-ին

Մեզանում, Շիրակ գաւառում, կատաբեալ գարուն է թագաւորում։ Այս տարի սովորականից վաղ բացվեցին Շիրակի ամբողջ դաշտերը, ձիւները բոլորովին հալվեցին և մի քանի օր է, որ շարունակ անձրև է տեղում այստեղ. յոյս կայ, որ մինչև առաջիկայ մարտ ամսի 5 երկրագործները ցանեն իրանց արտերը։ Օրերը լինում են տաք. այս տարի մենք խիստ ցրտեր չենք տեսել։ Անասունների տակաւութիւնը բաւական կոտորեց եղջիւրաւոր կենդանիներին, իսկ այժմ վերջացել է։ Շիրակում և ոչ մի տարափոխիկ հիւանդութիւններ չը կան, թէ հասակաւոր մարդկանց մէջ և թէ երեխայոց մէջ։

Աղջիկ փախցնելու դէպքեր միշտ պատահում են մեզանում։ Պաշլուխ ասված փողը (գլխադին) օրից օր բարձրանում է 120-ից 150 ռուբլ։ Շատ անգամ նշան դրած օրիորդին էլ են ուժով փախցնում։ Սրանից շատ անգամ ծագում են վատ հետևանքներ, կռիւներ, մարդասպանութիւններ։ Քանի մի օր առաջ Ղազախլոխ գիւղում մի հարս փախցրին, և տանից դուրս երկու օր պահեցին նրան։ Աղքատ, չքաւոր գիւղացին որ տեղից ճարէ 100 ռուբլ փող իր աղջկան նշանելու համար, այն ինչ իր գերդաստանը պահելու, կերակրելու համար անկարող է լինում անգամ լակ հաց ճարել, այն էլ այսպիսի ամենատաք տարիներում։ Եւ ահա նա դիմում է հարուստ դրացուն պարտքով փող վերցնելու, այն է 40 տոկոսով, դեռ մի քանի օրավար էլ հող առանց վարձի պէտք է տայ փողատիրոջը վարելու և ցանելու այնքան ժամանակ, մինչև որ ամբողջ պարտքից ազատվի։ Մեծ մասամբ նա այլ ևս ազատվելու ճար չունի, և դառնում է փողատիրոջ ստրուկ. փողի տոկոսը բարդվելով դրամագլխի վրա, օրից օր շատանում է, և այդպիսով խեղճ թշուառ պարտապանը կորչում է պարտքի անդունդի մէջ։

Շիրակը ունի 23 հայ գիւղեր, որոնց մէջ չը կայ ոչ մի քահանայ որ համապատասխան լինէր իր կոչմանը, չը նայելով որ ամբողջ շրջանում նրանց թիւը մօտաւորապէս 50-ի է հասնում։ Գիւղական տանուտէրը Շիրակի գիւղերում մեծ դեր է խաղում ժողովրդի կեանքում։ Նրա հրամաններին ենթարկվում են և քահանաները։ Պէտք է խոստովանվել որ Շիրակի գիւղերում հոգևոր գործերը շատ ցաւալի դրութեան մէջ են գտնվում, և ժողովուրդը գրեթէ անտարբեր է դարձել դէպի կրօնը և եկեղեցին։

Ց. Ց.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վաղը, կիրակի, մարտի 9-ին, հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ, լինելու են ԹԻՖԼԻՍԻ հայոց եկեղեցիներում եկեղեցական պատգամաւորների ընտրութիւններ։ Այդ ընտրված պատգամաւորները իրանց կողմից մի քանի ժամանակից յետոյ պէտք է ընտրեն Ներսիսեան ազգային հոգևոր դպրանոցի համար հոգաբարձուներ։

—

«Մշակի» մէջ հաղորդել ենք արդէն որ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը մտադիր է հիմնել Թիֆլիսում Մուշաիդի մօտ գտնվող բուսաբանական այգիում այգեգործութեան ուսումնարան։—Երեքշաբթի, ամսիս 4-ին, արդէն այդ ուսումնարանի շինութեան հիմքը դրվեցաւ, ընկերութեան անդամների ներկայութեամբ։ Մայիսից կը սկսվի աշակերտների ընդունելութիւնը։

—

Հրատարակում ենք քաղաքային վարչութեան ուշադրութիւնը Նորաշէն եկեղեցու մօտ Դվորեանակի փողոցի վրա գտնվող փլատակների մօտ դիզված կեղտոտութիւնների վրա։ Տաքերը սկսում են, և գէթ այժմ պէտք է միջոցներ ձեռք առնել քաղաքի մի քանի մասերը աղտոտելու այն տարատեսակ կեղտոտութիւններից, որով լցված են նեղ փողոցները, փոքրիկ բակերը, և միմեանց վրա կուտակված հին անների բոլոր անկիւնները։

—

Փետրվար կամ մարտ ամսից «Մշակին» դրվելով, պէտք է վճարել խմբագրութեանը 9 ռուբլի։

—

Այսօր, շաբաթ օր, մարտի 8-ին, ժամը 8-ին երեկոյեան ԹԻՖԼԻՍԻ Թատրոնում լինելու է նշանաւոր ռուս պիանիստուհի, տիկին Տիմանովայի երկրորդ և վերջին կօնցերտ, մասնակցութեամբ տ. տ. Զարուդնայի, Սմիրնովայի և Թատրոնական օրկէստրի։ Տեղերի գները նոյն են, ինչ որ օպերաների ներկայացումների ժամանակ։

Ամսիս 6-ին, երեկոյեան 8 ժամին, Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում կայացաւ ընկերութեան ընդհանուր ժողովը։ Ներկայ էին մօտ 15 անդամ և 10-ից աւելի կողմնակի անձինք։ Բացանելով ժողովը, նախագահը առաջարկեց ընտրել մի յանձնաժողով, որը մտացած բժշկական ընկերութեան և քաղաքային վարչութեան կողմից ընտրված անձանց հետ, մշակէ կաթի կեղծելու գործին առաջն առնելու համար մի նախագիծ։ Եղան նկատողութիւններ որ այդպիսի խառն յանձնաժողով կազմելու համար, պէտք է իմանալ բժշկական ընկերութեան և քաղաքային վարչութեան կարծիքը և ցանկութիւնը։ Ձայների բազմութեամբ ընտրվեցաւ ընկերութեան մի քանի անդամներից կազմված մի յանձնաժողով։ Ընկերութեան խորհուրդը կը դիմէ քաղաքային վարչութեանը և բժշկական ընկերութեանը նրանց մասնակցութիւնը խնդրելու։ Ընտրվեցաւ մի ուրիշ յանձնաժողով, վերահսկելու ընկերութեան դրամական հաշիւները։ Ապա կարդացվեցան պ. Լէրմանտէի 1884 և 1885 թուականներին Կովկասեան Շերամապահութեան վերաբերեալ զեկուցումները։ Այդ զեկուցումների մասին մանրամասն կը խօսենք «Մշակի» յաջորդ համարներից մէկում։ Կաշխատենք մի քանի խօսք ևս ասել այդ զեկուցումների առիթով տեղի ունեցած վիճաբանութիւնների մասին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Արդաբիլ, 6 փետրվարի

Դիտակատների անհերքելի դիտողութիւնն է, որ կլիման մեծ ազդեցութիւն ունի բնակիչների վրա. և ուրեմն զարմանալի չէ որ Պարսկաստանի կլիմայի պէս մի կլիմա քիչ չէ նպաստել պարսիկ ազգի մէջ հաստատելու մի կողմից սարկութիւն և անհաստատ բնաւորութիւն, միւս կողմից բռնութիւն և կամայականութիւն։ Կրօնը՝ ժողովրդի աշխարհայեցողութեան արտայայտութիւնը, նոյնպէս մեծ դեր է խաղում ժողովրդի բնաւորութեան կազմակերպվելու մէջ։ Սա նոյնպէս յարմարվելով կլիմայի հետ, ներկայացնում է ժողովրդի զգացմանց արտայայտութիւն։ Բայց ինչ է պարսիկ ժողովուրդը։ Այդ ժողովրդի ամբողջութեան մէջ կայ երեք դասակարգ՝ հրամայող, գործադրող և հպատակվող։ Ուրեմն կարող ենք ժողովուրդը բաժանել երեք որոշ մասի՝ հոգևորականներ, ազնուականներ (պաշտօնեաներ) և հասարակ դաս։ Հոգևորական դասը կազմում են մուշտէիդները (դէնպետ), մոլլաները (քահանաները), սէյիդները (մարգարէի սերունդներ), հաջիները (Մեքքա գնացողներ) և դարձեալ Դիարբէքիր վերադառնալ։ Եւ ահա Տիգրանակերտի ժողովուրդը նորից նրա և նրա եղբօր հեռացումն է խնդրում բարձր կառավարութիւնից։

* * *

Կ. Պոլսում հրատարակվող «Թերճէմանը Հաղիգաթի» մէջ լուր է տպված որ Գրիգոր Էֆէնդի Օտեան, որ Փարիզումն է գտնվում, սաստիկ հիւանդանալով, նրա քոյրը, օրիորդ Եւֆիմէ, Կ. Պոլսից հեռագրով կանչվեցաւ Փարիզ։

* * *

Կ. Պոլսի քաղաքական Բօրէրտեան վարժարանի հայ ուսանողները կազմեցին իրանց մէջ մի ընկերութիւն և գումար հանգանակեցին, որ և յանձնեցին հայոց Միացեալ ընկերութեանը, այդ ընկերութեան ձեռքով Տուրուբերանի նահանգի Կինճ գաւառակի Արշէն գիւղի մէջ նոր բացած դպրոցի ծախսերը հոգալու համար։

* * *

Կ. Պոլսի Բէրա ասված թաղի մէջ գտնվող հայ ասորոց վարժարանի օգտին պարահանդէս պիտի տրվի։ Այդ պարահանդէսի կարգադրող յանձնաժողովը աջողութեամբ առաջ է տանում հանգանակութեան գործը յօգուտ այդ դպրոցի և ինչպէս երևում է թէ ռուսաց, թէ անգլիական և թէ գերմանական դեսպանները համակրութեամբ են վերաբերվում դէպի այդ գործը և արդէն մեծ թվով տոմսակներ առել են։

* * *

Կ Պոլսի հայոց լրագիրները պատմում են հետևեալը դէպքը, որ տեղի ունեցաւ Վանի հայոց առաջնորդարանում։ Յունվար ամսին ներկայ թափ մի ինչ որ վանեցի Տէր-Յովհաննիսեան Գրիգոր աղայի խանութից անցայտ գողեր գողանում են 200 լիրա։ Ցանցաւորներին որոնում են, բայց ոչ ոքին չեն կարող գտնել։ Վերջը կասկած է ընկնում մի քանի գիշերապահների վրա և նրանց կալանաւորում ու բանտարկում են։ Գրիգոր աղան դիմում է խնդիրքով Վանի առաջնորդ Պողոս սրբազանին և սա խոստանում է ամեն ջանք գործ դնել գողերին գտնելու համար։ Եւ ահա ինչ միջոց է գործ դնում սրբազանը։ Նա կանչել է տալիս առաջնորդարան մի մահմեդական դերվիշին, որ յայտնի է Վանում իր կախարդական ընդունակութեամբ, կանչել է տալիս և դողութեան մէջ կասկածվածներին։ Դերվիշը բոլորի առջև պատրաստում է ալիւրից մի առանձին տեսակ հաց և բոլոր մեղադրվածներին ուտացնում այդ հացից, յայտնելով որ այդ հացը մի առանձին զօրութիւն ունի. եթէ այդ հացից արդար մարդը կուտի, նրան չի վնասի, բայց եթէ գողը կուտի, երեք օրից յետոյ անպատճառ կը հիւանդանայ։ Մեղադրվածները առաջնորդի ներկայութեամբ կերան այդ հացից, այնուհետև ոչ թէ երեք, այլ հինգ, վեց օր անցաւ և նրանցից ոչ մէկը դեռ ևս չը հիւանդացաւ։ Եւ այդ տեսակ կախարդական բաներով զբաղվում է հայոց քրիստոնէական եկեղեցու առաջնորդը, նոյն իսկ առաջնորդարանում, գողեր գտնելու համար օգնութիւն խնդրելով մի մահմեդական կախարդ դերվիշից և հաւատ ընծայելով կախարդութիւններին և հմայութիւններին։ Եթէ Կ. Պոլսի լրագիրներից հաղորդված այդ լուրը ստոյգ է, մենք կարծում ենք որ Կ. Պոլսի հայոց ազգային ժողովը աւելի գայթակղութեան պատճառ պիտի համարի որ մի հայոց եպիսկոպոս հեթանոսական գործողութեան, կախարդութեանն ու հմայութեան է հաւատում, քան թէ այն, որ անմեղ մանուկներ ասնամանների եկեղեցու սեղանին են մօտենում ու ասնամանների եկեղեցու խորանն են բարձրանում։

«Moniteur de Rome» կաթոլիկ լրագիրը նորերումս մի յօդուած է հրատարակել հայերի կրօնափոխութեան խնդրի առիթով։ Կ. Պոլսի ազգային վարչութեան խառն ժողովը ուշադրութիւն դարձնելով այդ յօդուածի վրա, որ արատավորեցաւ Կ. Պոլսի հայոց լրագիրներում, որոշեց գրել Տրապիզոնի, Մարաշի, Ամասիայի, Մարզուանի և այլ տեղերի առաջնորդներին ու գաւառական վարչութիւններին, յանձնարարելով որ տեղեկագրեն թէ իրանց վիճակների մէջ որչափ կաթոլիկներ և բողոքականներ են գտնվում, թէ հայերից որչափ և ինչ պատճառներով դիմած են ի կաթոլիկութիւն և ի բողոքականութիւն և վերջապէս մինչև այժմ ինչ միջոցներ ձեռք առած են կրօնափոխութեան չարժման նկատմամբ տեղական ազգային վարչութիւնները։

* * *

Զմիւռնիայում կայ մի շատ հարուստ հայ, Յովհաննէս էֆէնդի Սպարթալեան։ Այս անձը վճռել է իր ծախսով մի հայոց ազգային վարժարան հիմնել Զմիւռնիայում։ Եւ ահա, ինչպէս հաղորդում են Կ. Պոլսի լրագիրները, մօտ օրերումս այդ վարժարանի հիմնարկութեան առաջին հանդէսը տեղի է ունեցել Զմիւռնիայում, ներկայութեամբ Զմիւռնիայի կուսակալի, կառավարչական բարձրաստիճան պաշտօնեաների և խուռն բազմութեան։ Հանդիսում բարեմաղթութիւններ են կատարվել Սուլթանի կեանքի և բարօրութեան համար։

* * *

Անցեալները Կ. Պոլսի մի քանի հայեր անցնելով քաղաքի փողոցներով, նկատեցին հնավաճառ (անտիքաճի) մի հրէայի խանութում եկեղեցական զգեստներ, խաչեր և աւետարաններ։ Անմիջապէս խմբով ուսեցին պատրիարքարանը և պատրիարքական փոխանորդը կանչել ուսեց հրէային։ Սա բացատրեց թէ փողով էր առել յիշեալ իրեղէնները Քոնթի կոչված գիւղում։ Հնութիւնները փոխադրեցին պատրիարքարան, իսկ ինքն պատրիարքը մի «թագրիր» (գանգատագիր) ուղղելով Կ. Պոլսի ընդհանուր ղաւառապետին (պրոկուրորին), գործի էութիւնը այդ թագրիրի մէջ պատմելուց յետոյ, ասում է թէ եկեղեցու իրաւասութիւնից դուրս է այդ տեսակ գործի քննութիւնը և այդ քննութիւնը իրաւամբ կառավարութեանն է պատկանում։ Թագրիրի մէջ պատրիարքը խնդրում է որ դատական իշխանութեան ձեռքով հարկ եղած քննութիւնները կատարվեն, ստուգելու համար թէ ոքանչելից են այդ եկեղեցական հնութիւնները, ինչպէս և ումից են առնված։

* * *

Մի ինչ որ խորհրդաւոր անցք է պատահել հայոց Նարը—Գարու վարժարանի մէջ։ Երևում է թէ աշակերտներից շատերը մեղանչած լինելով բարոյականութեան դէմ, նրանցից 67 հոգի անմիջապէս աքսորվեցան դպրոցից։ Այս թվից 41 թոշակաւոր են և 26 ձրիավարժ։ Բացի սրանից յայտնվեցաւ որ դպրոցի աշակերտներից շատերը սկսել են եղբայրների վարժարանը յաճախել և դեռ մինչև այժմ շարունակում են յաճախել։ Այդ առիթով պատրիարքը ժողովրդի կողմից հանրագիր ստացաւ որ և յանձնեց Քաղաքական ժողովին «ի պարտ ու պատշաճ անօրինութիւն»։

Ամեն քան Կ. Պոլսի ազգային վարչութեան մէջ վերջանում է անվերջանալի զրպարտութիւններով, յանձնելով այս կամ այն ազգային ատեանին «ի պարտ ու պատշաճ անօրինութիւն»։

հանայ) և ախունդները (վարժապետ)։ Այս դասն է որ պահպանում է կրօնը, հաւատը, նահապետական կեանքը և անշարժութիւնը։

Այս կրօնը ոչ թէ աստուածաբանական, այլ միայն ֆանատիկոսական ուղղութիւն ունի։ Հոգևորականը դուրս գալով իր կրօնական շրջանից քաղաքական և ընտանեկան կեանքի մէջ ևս միջամտութիւն է անում։ Ամենքին յայտնի է թէ Պարսկաստանը կառավարվում է մոլլաներով. օրինակ, նոքա առևտրի վրա ևս ազդեցութիւն ունեն։ Ոչ մի առևտուր, լինի մի երկու թումանի, կամ զուանի, հաստատ չի համարվի, եթէ մոլլան նրա վրա սիկա (հաստատութիւն) չը կարդայ և այս սիկա այժ ունի, թէև լինի սա ապօրինի (մանաւանդ Մուշտէյիդի կարդացածը)։ Հոգևորականը դատաստանական գործի մէջ ևս մտնում է։ Հասարակ ժողովուրդը այնքան չէ ճանաչում դատաւորներին, որքան մուշտէյիդին. յանցաւորը մուշտէյիդի տունը մտաւ թէ չէ՝ կազատվի յանցանքից. հարստահարվողը մուշտէյիդին գանգատվի թէ չէ՝ նա կարող է բռնութեամբ նրա պահանջը լցուցանել։ Եթէ հարստահարութիւնը պատահի տերութեան կողմից մի գիւղի վրա, իսկոյն առաւօտը լուսաբացին կամ երեկոյեան արևամուտին պարսիկները կը հաւաքվեն նահանգի կամ քաղաքի մուշտէյիդի դուռը, Ալլա (Աստուած) կը կանչեն և մուշտէյիդը կը սկսի այդ մասին բանակցութիւններ անել տերութեան հետ և կարող է գործին վերջ տալ իր հեղինակութեան շնորհով։ Մահմեդական հոգևորականը չը նայելով որ ժողովրդին մեծաւորապէս ճնշում է, բայց բարոյապէս և նիւթապէս օգնում է, մանաւանդ բռնակալ դատաւորների ձեռքից, որի համար ժողովրդի մէջ մեծ անուն և համբաւ ունի։

Մեծաւորապէս վնասում են այդ հոգևորականները իրանց թիւր հայացքների շնորհով։ Հոգևորականը, այդ զօրեղ դասակարգը, բոլորովին հակառակ է ուսման նոր ձևին. բացի զօրանից և մի քանի անհեթեթ առասպելական գրքերից, որոնց սկզբունքը կազմում են դարձեալ զօրանի այեաները, ուրիշ գիրք չէ մտած ուսումնարանի մէջ. դասագրքերն են՝ Զօրան, Գիւլիստան, Հաֆիզ, Զարաքա և Շիր-թուրի։ Այստեղ ուսումը սկսվում է կրօնականով, շարունակվում է կրօնականով և վերջանում է կրօնականով, այսինքն եօթ տարեկան երեխան սկսում է անգիր անել զօրանը, յետոյ արաբերէնից թարգմանել տեղական լեզուով և վերջը բացատրել կրօնական կէտերը և այսպիսով լոկ զօրանը երեխային 7 տարեկանից հասցնում է մինչև 25—30 տարեկան։ Ամբողջ Պարսկաստանում կայ երեք քաղաքական ուսումնարան, որի մասին յետոյ, իսկ մնացած ուսումնարանները՝ հոգևոր գերեզմաններ են։ Հոգևորականը հակառակ է նորաձևութեան. նրա համար բոլոր նոր նոր ձևերը, շարժվելը, ուտելը, հագնվելը սրբապղծութիւն է, նա անում և անել է տալիս այն, ինչ որ Մահմեան է արել և հրամայել։ Մինչև անգամ դատաստանական դատելու նոր ձևերին հակառակ է, որովհետև դրանք չը կան շարեաթի մէջ։ Մի խօսքով Պարսկաստանի հոգևորականը այն կուպրն է որ ողջ ազգին սնացնելով, ոգիտութեան մէջ է պահում։ Հոգևորականի կարգին են պատկանում և Դարվիշները ու Սեյիդները։ Ամեն քաղաքում, գիւղում դուք կը պատահէք մի այլանդակ մարդու՝ հերարձակ, ոտաբոբիկ, կացինը ձեռքը բռնած, կօկսի ընկոյզը ուսը ձգած և երբեմն ահեղ երևալու համար առիւծի կամ ընձի մորթը վրէն ձգած, երգում է Ալիի մեծագործութիւնները և փող հաւաքում։ Դա Դարվիշն է, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ քարոզիչ։ Շատ են պատահում չահ-ղադա, այսինքն թագաւորազուն դարվիշներ, որոնց կեանքի նպատակը իբր թէ ժողովրդի բարօրութիւնն է։

Սեյիդները Մահմեդի որդիքն են, հետևաբար և ժողովրդի տաճանորդով պիտի ապրեն, որովհետև աղա են։ Սոցա անուան վրա միշտ կաւելացնեն աղա բառը, ինչպէս և թագաւորազուններինը՝ միրզա։ Սեյիդի նշանն է սև փաթոթ և սև կամ կանաչ գօտի, որով զանազանվում են սպիտակը կրող մոլլաներից և ախունդներից։ Ինչպէս հոգևորական դասը և առաւելապէս սրանք ոսկէ մատանի չեն կրում մատներում, որովհետև մարգարէն անիծել է ոսկին։ Ամենայն օր կը պատահեն ձեզ փողոցներում սեյիդների խումբեր, որոնք այս կամ այն վաճառականին նեղում են, խանութից ապրանքները ուժով քաշում են և կամ ճանապարհորդի առաջը կտրած սալամաթի (առողջութեամբ տեղ հասնելու) են ուզում։ Ցուղները արժանանում են մի տեսակ օրհնութեան, որ մեր պահպանիչի միտքն ունի, իսկ չը տուողները արժանանում են անէծքի, ծեծի, հայհոյանքի։ Սեյիդներին ծեծել, մինչև անգամ հայհոյել անկարելի է, որովհետև մարգարէի որդիք են և միշտ նրանց կամքը պիտի կատարել։ Եւ դա է պատճառը, որ մարգարէի այս որդիքը միշտ անգործ են լինում և աւելացնում են պարապ ձեռքերի վրա բիւր ձեռքեր։ Պարսկաստանում հոգևորական անձնաւորութիւնները աշխարհականներից բաղմաթիւ են, ի բաց առեալ գինուորները։ Եւ այդ է պատճառը, որ ժողովուրդը չէ կարողանում պահել նրանց իր նիւթական միջոցներով։ Ուստի հոգևորականը պարապվում է և աշխարհական գործերով։ Հոգևորական լինելու համար առանձին կարգ ու կանոն չը կայ, մոլլայի որդին մոլլա է, առանց ժողովրդի ընտրութեան։

Ամենայն մի քաղաք ունի իր համար մի մուշտէյիդ, որը իր կոչումը ստանում է Քաբէում երկար տարիներ զօրան թերթելուց յետոյ։ Հոգևորականների մէջ, բացի դարվիշներից կուսակրօն չը կայ, այլ ընդհակառակն, որչափ հոգևորականի կոչումը մեծ է, այնքան նա կանայք էլ շատ պիտի ունենայ, մանաւանդ յարգելի է, եթէ օտար ազգի աղջիկ կին առնէ։ Եկեղեցական բարդ ծիսակատարութիւն չունեն. հասարակ օրերը նրանք ևս, իբրև հասարակ ժողովուրդ, եկեղեցում իրանց նամազ են կատարում, իսկ հինգշաբթի և ուրբաթ օրերը քարոզով են պարապում։ Օրվայ մնացած ժամերը առհասարակ ժողովրդի գործերով են զբաղվում, սիկա են կարդում, քաբին (պսակ) անում, արձակում տալիս, և կամ իրանց դիմողին քաւութեան նամազի կամ լուացման այն ձևը սովորեցնում, որ հարկաւոր է գործ դնել երբ մահմեդականը մի որ և է պատճառով այլադաւան մարդու հետ շփվեցաւ, կամ անձրևի ժամանակ այլադաւանի շորերին դիպաւ և այլն։

Պարսկաստանը կրօնապետական երկրի կազմակերպութեան կատարելատիպն է։

Ռ. Հ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Վերջին ժամանակները անգլիական պահպանողականները օգուտ են քաղում ամենայն մի դէպքից խանդարելու Գլադստոնի ցանկութիւններին Իրլանդիայի վերաբերմամբ։ Բիւդժէտի հարցի քննութեան ժամանակ, Հօլմը ասաց, որ պալատը ցանկութիւն չունի քննելու այդ հարցը, մինչև չը գիտենայ, թէ ինչ դիրք է ուզում բռնել կառավարութիւնը Իրլանդիայում խաղաղութիւն հաստատելու համար։ Պատասխանելով այդ ընդհանուր դժգոհութիւն յարուցած նկատողութեանը, Գլադստոնը ասաց, որ նախարարութիւնը մտադիր է լուծել իրլանդական հարցը հողային և կառավարական բարենորոգումներով։ Ապագան ցոյց կը տայ թէ ինչ կը լինի այդ բարենորոգումը, այսքանը միայն այժմ որոշ է, որ իրլանդական խնդիրը սարսափելի սուր բնաւորութիւն է ստացել։ Մի կողմից լորդ Չերչիլը ամեն միջոց գործ է դնում խանդարելու Գլադստոնի կաբինետի մտադրութիւնը, միւս կողմից իրլանդական գործերի մինիստր, ազատամիտ կուսակցութեան եռանդուն անդամը՝ Մորլէյ, փետրվարի 20-ին կայացած ժողովում, յարձակվելով Չերչիլի վրա, յայտնեց, որ եթէ Գլադստոնի կաբինէտը անաջողութեան կը հանդիպի իրլանդական գործերում, այն ժամանակ համայնքների պալատը կարձակուի, և կառավարութիւնը կը դիմէ ազգին և կը խնդրէ յայտնելու իր ցանկութիւնը և կարծիքը այդ հարցի մասին։ Ազգային կուսակցութիւնը իրան խաղաղ է պահում առ այժմ։

—Սերբիայից հեռագրում են, որ այնտեղ անհանգստութիւն են պատճառել այն անկարգութիւնները, որոնք տեղի ունեցան իշխան Կարագէօրգիևիչի շնորհիւ, որի ստորագրութեամբ տարածվեցան զանազան պրոկլամացիաներ, ընդդէմ Միլան թագաւորի։ Այժմ հեռագիրը պաշտօնապէս հերքում է այդ բանը իշխանի մասին։

—«Standard» լրագրի մէջ տպուած է Աֆէնքի անգլիական դեսպանի կնոջ նամակը, որով նա հաղորդելով դրօշակի տակ կանչուած յունաց պահեստի զօրքի ընտանիքի ողորմելի դրութիւնը և աղքատութիւնը, դիմում է անգլիացիներին և խնդրում է նրանց օգնել խեղճերին այս ծանր դրութեան ժամանակ։ Սակայն դժուար թէ յունաց ինքնասիրութիւնը թոյլ տայ իրան օտարի օգնութեանը դիմելու, հայրենիքի պատուի պաշտպան զինուորի ընտանիքը կերակրելու համար։

—Թէհրանից հաղորդում են, որ արտաքին գործերի մինիստր նշանակված է Եակիա-խանը։ Եակիա-խանը համակրում է ռուսաց կառավարութեանը։

—Լորդ Չերչիլը արդէն սկսեց իր ճանապարհորդութիւնը Իրլանդիայում զինելու համար բողոքական իրլանդացիներին կաթոլիկ-իրլանդացիների դէմ։ Լարնայում խօսեցած իր ճառի մէջ նա ասաց, որ բողոքականները իրանց արտօնութիւնները պաշտպանելու համար հարկաւոր դէպքում պիտի դիմեն և զէնքի։ Չերչիլը յոյս ունի Իրլանդիայում ներքին խռովութիւններ առաջ բերել, Գլադստոնի նախագիծը փչրելու համար։ «Pall Mall Gazette» լրագիրը այս առիթով նկատում է որ այդ ենթադրած խառնակութիւնը ոչինչ հետևանք չի ունենայ։ Լրագիրների յայտարարութիւնները Չերչիլի Պարնէլի հետ ունեցած յարաբերութիւնների մասին, եթէ փաստերով ճշդվեն, Սալիսբիւրիի կաբինէտի նախկին անդամի՝ Չերչիլի ցանկութիւնները օդը կը ցնդվեն անկասկած։

—Փարիզում այս օրերս լոյս տեսաւ «Graves aveux» վերնագրով մի բրօշիւր, որի մէջ քննադատվում է լեհական հարցին վերաբերեալ իշխան Բիսմարկի ճառը և ապացուցվում է, որ վերջին տասը տարվայ ընթացքում լեհական տարրը Պրուսիայում զարգացման բարձր աստիճաններին է հասել։ Հեղինակը խորհուրդ է տալիս ֆրանսիացիներին ուշադրութեամբ հետևել լեհական խնդրին, հարկաւոր դէպքում նրանից օգտվելու համար...

—Արտասահմանի լրագիրները վերջին օրերը առանձին հետաքրքրութեամբ սկսել են խօսել այն մասին, որ իբրև թէ Լօնդոնի կաբինէտը յարաբերութեան մէջ է մտել Բ. Դրան հետ, ստանալու համար Կրիտ կղզին դրամական վարձատրութեամբ։ Կարծում են, որ դեռ Սալիսբիւրին այդ գործը վերջացրել էր երեք միլիոն ֆունտ ստերլինգով։ Ենթադրում են, որ հէնց այդ պատճառով Անգլիան յայտնեց իր պատրաստականութիւնը օգնելու Տաճկաստանին, եթէ Ցունաստանը յարձակումն կը գործի և իբրև թէ հէնց այդ պատճառով Գլադստոն յայտնեց, որ ինքը պիտի հետևի Սալիսբիւրիի ուղղութեանը տաճկա-յունական հարցում։

—Զինուորագրութեան մասին աւստրիական լրագիրների պահանջները աղդեցութիւն են գործում. նորերումս զինուորագրութեան յանձնաժողովի անդամներից մէկի հարցին, նախարարը պատասխանեց, որ զօրաշղթերի մէջ տեղական լեզուները գործ կածվեն զինուորական վարժութիւնների ժամանակ։

—Բելգրադից հաղորդում են, որ կառավարչական կուսակցութիւնը դժգոհ է խաղաղութեան հաստատվելուց. դրա հակառակ, ազգային կուսակցութիւնը մեծ ուրախութեամբ ընդունեց եղբայր-ժողովրդների մէջ տեղի ունեցած հաշտութեան լուրը, և բարեկամական դիրք է բռնում դէպի Բոլգարիան։

—Եւրօպական լրագրութիւնը շարունակում է խօսել Բալկանեան պետութիւնների դաշնակցութեան վրա, միշտ աւելացնելով այն կարծիքը, որ այդ բանը անկարելի է, և երևակայութիւն պէտք է համարել։ «Տարիդ» լրագրի արձակված բաղը դիպլոմատիական նորութիւններ սիրողներին այդպիսով բաւականին նիւթ տուեց, սակայն դաշնակցութիւն երևակայել լեզուով, ցեղով, շահերով, ձգտումներով և դաղափարներով միմեանց թշնամի, բաւականին անկիրթ ժողովրդի մէջ,—առնուազն անհեռատեսութիւն է։

—Փարիզից փետրվարի 20-ից հեռագրում են։ Այսօրուայ պատգամաւորների ժողովը մերժեց ինչպէս Դիւշէի առաջարկութիւնը (պրինցներին անմիջապէս արտաքսելու մասին), այնպէս էլ Ռիվէի առաջարկութիւնը (պրինցներին հարկաւոր ժամանակ արտաքսելու մասին), և ձայների անհամեմատ մեծամասնութեամբ, 353 ընդդէմ 112-ի, ընդունեց կառավարութեան առաջարկած բանաձևը, այն է անցնել հերթական հարցին։ Դրանով ժողովը յայտնեց իր հաւատը դէպի կառավարութիւնը և համոզմունքը, թէ կառավարութիւնը հարկաւոր ժամանակ, հանգամանքներին յարմար կերպով կարող է ըստ արժանւոյն վարվել հասարակապետութեան թշնամի պրինցների հետ։ Առարկութիւնների ժամանակ Ֆրէյսինէն պրինցներին արտաքսելու խնդիրը համարեց անօգուտ և անժամանակ։ Այդպիսով Ֆրէյսինէն Մադագասկարի խնդրի յաջող ելքից յետոյ, կարողացաւ մի այնպիսի ձև տալ պրինցների հարցին, որ ուրիշ խօսքով հասարակապետութեան ժողովրդականութեան հարցն է, որը կարող է բաւականին այժ տալ ազատամիտ կուսակցութեան, և նոյն իսկ Ֆրէյսինէի կաբինէտի ապագայ գործունէութիւնը յաջողեցնել։

—Եւրօպական լրագիրները հաղորդում են, որ տաճկա-բոլգարական դաշնագիրը ձևակերպելու և ընդունելութեան արժանացնելու համար իտալական կառավարութիւնը եւրօպական կաբինետներին առաջարկեց հետևեալը. մեծ պետութիւնների Պոլսի ներկայացուցիչները ներկայացնեն Բ. Դրան հաւաքական յայտարարութիւն, և յայտնեն նրան, որ Եւրօպան իր հաւանութիւնը կը տայ տաճկա-բոլգարական դաշնագրութեանը, եթէ կը մըտցնվեն նորա մէջ հետևեալ փոփոխութիւնները, այն է. ա) «իշխան Ալէքսանդր» բառերի փոխանակ, դաշնագրի մէջ մտցնել «բոլգարական իշխան» բառերը, բ) բոլգարական զօրքը պարտաւոր չը լինի օգնել Տաճկաստանին պատերազմների ժամանակ, և գ) Բումելիայի գեներալ-նահանգապետը նշանակուի ոչ թէ հինգ տարով, ինչպէս որոշուած է դաշնագրի մէջ, այլ անորոշ ժամանակով։ Սուլթանի կառավարութիւնը կարող է առանց ուշացնելու հրատարակել այս փոփոխված դաշնագիրը, իսկ վերջնական հաստատութիւնը կը լինի Պօլսում կազմուելի դեսպանաժողովի ձեռքով։ «Kölnische Zeitung» լրագիրը հաղորդում է, որ Իտալիայի այդ առաջարկութիւնը կընդունվի միաձայն բոլոր պետութիւնների կողմից։

—Փարիզից գրում են «National Zeitung» լրագրին. «Պատգամաւորների ժողովում տեղի ունեցած դէպքը սկզբում մեծ յուզմունք առաջ բերեց։ Որովհետև առաջին անդամ ստրճանակը արձակվեցաւ այն ժամանակ, երբ խօսում էր պատերազմական մինիստրը, ուստի ամենքը կարծեցին որ այդ բոլորը գեներալ Բուլանժէի դէմ է։ Բոլոր պատգամաւորները վեր կացան իրանց տեղերից վախեցած։ Հասարակութիւնը աղմուկ բարձրացրեց։ Միմիայն նախագահ Ֆլօկէն սառնասիրտ էր և միշտ հրաւիրում էր պատգամաւորներին նստել իրանց տեղերը։ Շուտով ամենքը իմացան, որ ստրճանակ արձակողի միակ ցանկութիւնն է եղել իր վրա դարձնելու ընդհանուրի ուշադրութիւնը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

—

Ինչպէս յայտնի է, կարկուտը բաղմաչարչար գիւղացու ամենավտանգաւոր թշնամիներից մէկն է, որը մի քանի րոպէում կարող է ոչնչացնել ամբողջ գիւղի ապահովութեան միակ յոյսը։—Ազատելու գիւղացու համար այդ թշուառութեան հետ կապված դառն աղքատութիւնից, Շվէյցարիայում հասել են այս եզրակացութեան, որ ներկայում նպատակայարմար միջոցը կարկտի վնասի առաջն առնելու համար է—ապահովացնելը (страхованіе)։ Այդ նպատակով և սկզբունքով արդէն քանի մի տարի է Շվէյցարիայում, այդ գործի մէջ մասնագէտ Շրամմի նախաձեռնութեամբ կազմուած է մի «փոխադարձ—Ապահովող Ընկերութիւն»։ Ձեռնարկութիւնը միանդամայն ազատ է մասնաւոր անձանց շահագիտական դիտումներից։—Իրաքանչիւր ապահովագնող է մի և նոյն ժամանակ ընկերութեան անդամը՝ լիակատար իրաւունքներով։ Իրաքանչիւր ձեռնարկութեան մասնակցում է ամեն մի անդամը։ Ցուտ արդիւնքը նոյնպէս պատկանում է բոլորին։ Գիւղատնտեսների համար կենսական նշանակութիւն ունեցող այդ ընկերութիւնը այնքան յաջող է յառաջադիմում, որ այժմ Շվէյցարիայում շատ անդամ հարց է բարձրացվում այս մասին, որ կարկտից ապահովելը լինի իրաքանչիւր գիւղատնտեսի համար պարտաւորացուցիչ։ Այդ դեռ բաւական չէ. գիտութիւնը միջոցներ է մտածում անմիջապէս կռուել կարկուտի հետ, և այժմ մտածում են այս մասին, թէ կարելի է արդեօք որ և է տեխնիկական միջոցներով կարկտի վնասակար ներգործութեան առաջն առնել, կամ ուրիշ խօսքով, կարելի է հնարել կարկտարգել, ինչպէս որ հնարուած է չանթարգելը կայծակի դէմ։ Շատ գիտնականներ իրանց նուիրել են այդ խնդրին։ Ցայտնի է գիտութեան և գործնականութեան մէջ, որ անտառները թշնամի են կարկուտին, և որտեղ շատ կայ անտառ, այնտեղ կարկուտ քիչ է պատահում և այն էլ թոյլ կերպով։ Ցայտնի է նոյնպէս, որ էլեքտրականութիւնը, կայծակը ոչնչացնում է կարկտի զօրութիւնը։ Եւ այդ պատճառով այժմ շատ փորձեր են արուած չինելու նոյն իսկ արհեստական կարկտարգելներ, մնկելով շատ բարձր տեղերում սրածայր երկաթեայ սիներ։ Պրոֆէսօր Դիւֆուրը միանգամայն համոզուած լինելով սկզբունքի ճշդութեան մէջ, շարունակում է անդադար փորձեր անել։ Սկզբունքը, հիմքը տեսական կէտից միանդամայն ճիշդ է, և անկասկած թէ ոչ այսօր, գոնեայ վաղը գիտութիւնը կը գտնի այն միջոցները, որով կարելի է կուռել բնութեան անողոք այժի դէմ։

* * *

Մի գօրեցի հայ գրում է մեզ՝ «Պ. Ասիացու միտքը թէ հայերը ամէն բան մուֆթա վայելել են սիրում և թէ հայոց լրագրի մի համարը նոյն իսկ մի քանի տասնեակ մարդ են կարդում, բոլորովին ուղիղ է։ Հէնց որ փօստից «Մշակը» ստանում եմ, անմիջապէս ձեռքիցս խլում են և յետոյ նոյն համարը ձեռքից ձեռք անցնելով շատ անգամ կամ ինձ չէն դարձնում, կամ այն դրութեան մէջ են դարձնում ինձ, պատռտորած և կեղտոտած, որ այլ ևս կարդալ անհնարին է լինում։ Եւ նոյն մարդիկ, որոնք տարեկան տասրուբլի խնայում են մայրենի լեզուով հրատարակվող լրագրին բաժանորդ գրվելու, շատ անգամ մի երկու ժամվայ մէջ 20—50 բուբլ ծախսում են որ և է քէֆի, զուարճութեան և նոյն իսկ անառակութեան վրա։ Իսկ լրագիրը մուֆթա, ձրի են կարդում։ Գոնէ ամենեին չը կարդային, կասէինք որ չեն հետաքրքրվում. բայց ոչ, հետաքրքրվում են սաստիկ, կարդում են, միմեանց ձեռքից ձեռք են խլում,—միայն թէ փող վճարել չը կայ։ Հայի համար 12 ամսվայ ընթացքում 10 բուբլ ծախսելը լրագրի վրա աւելի ծանր է երեւում, քան թէ մի երկու ժամվայ մէջ 50 բուբլ ծախսելը շռայլութեան վրա։»

* * *

Մեր հայոց գիւղերում մի շատ վնասակար սովորութիւն կայ։ Ահա ինչ են գրում մեզ օրինակ Շուլավէր գիւղից։ Մեր գիւղում մի սովորութիւն կայ որ կատարեալ բարբարոսութիւն կարելի է համարել, այն է 12—13 տարեկան աղջկերանց մարդու տալը։ Այդ անչափ վաղաժամանակ պսակների հետեւանքը շատ ցաւալի է լինում կանանց առողջութեան համար։ Գիւղի 900 տան մէջ ոչ մի օրիորդ չը կայ որ լինի 14 կամ 15 տարեկան։ Այդքան վաղահասակ ամուսինը ինչ մայր պէտք է լինի։ Նա կամ ամենեին երեխայ ծնել ու նրան կաթ տալ անընդունակ է, կամ եթէ ծնում է երեխայ, այդ զաւակը տկար, թոյլ, հիւանդոտ է լինում և երեխաների մահացութիւնը շատ մեծ է լինում մեզանում։ Աւելի էլ անպիտան բան է, երբ 12 տարեկան երեխային ծնողները պսակում են մի 30—40 տարեկան մարդու հետ։ Բայց փորձեցէք այդ տեսակ տգէտ ծնողներին բան հասկացնել,—և իսկոյն պատասխան կը ստանաք. «Ի՛ի, ա տղա, հեռնակ խելառ չըլես, դէ էնա Ասանից փայը պակաս ա ըլէ, նրա ճըկատի կիրն էլ էնա կյրած ըլէ։»

* * *

Փետրուարի 8-ին Լօնդոնում փառաւոր հանդիսով տօնուեցաւ Դիկկենսի ծննդեան 74-ամեայ տարեդարձը։ Կարդացուեցան զանազան կտորներ անգլիացի երեւելի վիպասանի գրուածքներից, իսկ երեկոյեան տրուեցաւ դիմակահանդէս, որին մասնակցողները դիմակաւորուած և հագնուած էին վիպասանի գրուածքների հերոսների և հերոսուհիների նման։

* * *

Նորերումս Վիէննայի բարձր շրջանի կանայք մի ժողով կազմեցին, որի մէջ իշխանուհի Մետերնիխը առաջարկեց հանդանակութիւն բաց անել, և ուղարկել Փարիզ մի հմուտ բժիշկ, որը այնտեղ ուսումնասիրէ կատաղած կենդանիներից վնասուածներին բժշկելու գտած միջոցները, որպէս զի կարելի լինի հիմնել Վիէննայում մի հիւանդանոց, Պաստէօրի առաջարկութեամբ Փարիզում հիմնուելի հիւանդանոցի նման։ Այդ առաջարկութիւնը ընդունվեցաւ ժողովի կողմից միաձայն։

* * *

Թէհրանում փետրուարի 23-ին մեռաւ Պարսից Շահի հօրեղբայրը Ֆիրուզ-Միրզան։

* * *

Մի գերմանացի մանկավարժ (?!) Յովհան Հեբերլէյ անունով իր մանկավարժական (?) գործունէութեան յիսնամեայ ընթացքում, իր աշակերտներին տուել է 900,000 զաւազանի հարուած, 24,000 «ոզդի», 18,000 ապտակ, և 1,115,800 հարուած գլխին։

* * *

Փօրթուգալիայի հանդուցեալ թագաւոր Դոն-Ֆերդինանդը թողել է մի գրատուն, որը կազմուած է վերջին 25 տարուայ ընթացքում զանազան եւրոպական կառավարութիւններից արգելուած գրքերից և բրոշիւրներից։

* * *

Տրովադայի աւերակների խուզարկող յայտնի դոկտոր Շլիմանը այժմ իր հաւաքած հնութիւնների թանգարանն է պատրաստում Բերլինում։

* * *

Փարիզի գիտութեանց ճեմարանի մարտի մէկի (Ն. տ.) ժողովում Պաստէօրը կարդաց մի զեկուցումն, կատաղած կենդանիներից վնասուածներին առողջացնելու համար իր գործ դրած միջոցների հետեւանքների մասին։ Պաստէօրը նկատեց՝ թէ միջի այլոց, որ դժուար է հաւատալ թէ յիրաւի այնքան բազմաթիւ մարդիկ զոհվում են կատաղած կենդանիներին։ Նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը, ուրեմն ամիս ու կէս ժամանակի ընթացքում, Ecole Normale-ի մօտ հիմնած հիւանդանոցը մտել են 110 մարդ։ Նկարագրելով հիւանդներին, Պաստէօրը ցոյց տուեց թէ ինչպէս է երեւում հիւանդութիւնը։ Մի երեխայի, որին կատաղած կենդանին կծել էր երեսից, Պաստէօրը սկսել էր առողջացնել իր միջոցներով և չը նայած հիւանդութեան սաստկութեանը, երեխան արդէն առողջացած է։ Հիւանդանոց մտնողներից միայն մէկի վերաբերմամբ բժշկութիւնը ցանկալի պտուղներ չունեցաւ։ Դա մի աղջիկ էր, որին կատաղած շունը կծել էր նոյեմբերի 9-ին, և որին բերել էին Պաստէօրի մօտ 37 օրից յետոյ։ Վէրքի երկարութիւնը 12 սանտիմետր էր։ Պաստէօրը խոկոյն հասկացաւ, որ աղջկայ առողջանալու մասին խօսք էլ չէ կարող լինել, բայց մարդասիրութիւնից դրդուած նրան ընդունեց հիւանդանոցը։ Պաստէօրը ապացուցեց որ աղջիկը մեռաւ շան թոյնից և ոչ թէ պատուաստի թոյնից։ Իր բոլոր արած փորձերից Պաստէօրը եզրակացնում է, որ իր միջոցները գործադրելի են։ Դիմելով ստատիստական տեղեկութիւններին, Պաստէօրը յայտնեց, որ հիւանդանոց մտած 100 մարդուց՝ 33-ը պէտք է մեռնէին, յայտնի ժամանակից յետոյ, մինչդեռ Պաստէօրի հիւանդներից ոչ մէկը, բացի վերոյիշեալ աղջիկը, չէ մեռել։ Այդպիսով, ասաց Պաստէօրը, Ջրավախութեան դէմ գտնուած է դեղ, և այժմ անհրաժեշտ է հիմնել հիւանդանոց։ Դրանից յետոյ Պաստէօրը աւելացրեց, որ առաջինը կարծում էր, որ կարող է բժշկել միայն այն հիւանդներին, որոնք վնասուելուց մի քանի օր յետոյ մտնում են հիւանդանոց։ Գործից երևում է այժմ, որ յաջողուեցաւ բժշկել և այնպիսի հիւանդներ, որոնք վնասուած էին հիւանդանոց մտնելուց չորս ամիս, կամ նոյն իսկ մի քանի ամիս առաջ։ Նիւ-Եորքից եկած չորս երեխաներին պատուաստուեցաւ թոյնը նրանց վնասուելուց 21 օրից յետոյ։ Սակայն նրանք բոլորն էլ առողջանալու վրա են։ Ներկայում Պաստէօրի մօտ բժշկվում են հիւանդներ, որոնք եկել են Ռուսաստանից, Աւստրիայից, Անգլիայից, Բելգիայից, Իտալիայից և Իսպանիայից։ Հիւանդանոցը պիտի ունենայ միջազգային բնաւորութիւն։ Այդպիսի հիմնարկութեան համար արդէն զանազան կողմերից ղրկուած են Պաստէօրին փողեր։ Մինիստր-նախագահ Ֆրէյսինէն, որ ներկայ էր ժողովին, ասաց որ կառավարութիւնը իր կողմից ոչինչ չի խնայի Պաստէօրի մեծ գործի յաւաջադիմութեան համար։ Խոկոյն կազմուեցաւ և մի յանձնաժողով, որը պիտի քննէ այն հարցը, թէ ինչպէս իրականացնել Պաստէօրի միտքը։ Յանձնաժողովի անդամ գրվեցաւ Ֆրէյսինէն։ Ժողովի վերջում ամէնքը արտայայտեցին ամենաջերմ գովեստ Պաստէօրին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՓԱՐԻԶ, 5 մարտի։ Թիւրք-բուլգարական համաձայնութեան վաւերացնելը բոլոր պետութիւնների կողմից, ուշացաւ բուլգարական իշխանի արած վերջին պահանջմունքների պատճառով։

ԼՕՆԴՕՆ, 5 մարտի։ Գլադստոնը մտադիր է Իրլանդիային վերաբերեալ կազմած օրինագիծը վերոխուսութեան ենթարկել, որպէս զի կարողանայ մինիստրութեան մէջ պահել հրաժարական տուած Չեմբրլէնին և Թրեվելյանին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մարտի։ Երկաթուղիական խորհրդի նիստում, որը նշանակված է մարտի 6-ին, կը քննադատվի տասերեքերորդ ընդհանուր ժողովում եղած ուսական երկաթուղիների ներկայացուցիչների առաջարկած միջնորդութիւնը, որ վերաբերում է ընդհանրապէս երկաթուղային օրէնսդրութեան 17, 18, 19, 22, 24, 26, 31 և 36-որդ յօդուածների լրացնելուն։

ԼՕՆԴՕՆ, 6 մարտի։ «Բէյտերի գործակալութիւնը» հերքում է Վիէննայի լրագիրների յայտնած այն լուրը, որը իբրև թէ իշխան Ալէքսանդրի արած նոր պահանջները թելադրված են Անգլիայի կողմից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մարտի։ Այստեղի խիստ ուղիղական ընկերութիւնը, նախագահ Սկոբելևի առաջարկութեան համեմատ, վճռեց կառուցանել Մոսկվայում մի հիւանդանոց, Պաստէօրի սիստեմայով կատաղութեան թոյնը պատուաստելու համար։

ՎԱՐՇԱՎԱ, 6 մարտի։ Երկաթուղային երթեւեկութիւնը դադարած է ձիւնակոյտերի պատճառով. երրորդ օրն է որ ոչ մի փոստ չը կայ։

ԲՈՒԽԱՐԻՍՏ, 6 մարտի։ Երեկ տեղի ունեցաւ սերբո-բուլգարական հաշտական դաշնադրութեան՝ վաւերացման փոխանակութիւնը։

ԼՕՆԴՕՆ, 6 մարտի։ «Times» խստութեամբ դատապարտում է Յունաստանի յամառութիւնը և ասում է, որ Եւրոպան անտարբեր կը մնայ Թիւրքիայի և Յունաստանի մէջ լինելու պատերազմի վերաբերութեամբ։ Մինիստրական ճգնաժամը շարունակվում է. ենթադրում են, որ եթէ Զէմբրլէն և Թրիվելյան իրաւի հրաժարվեն, այն ժամանակ նրանց օրինակին կը հետևեն դարձեալ վեց կամ եօթը երկրորդական անդամներ կառավարութեան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մարտի։ Մեծ դուքս Հեսսէ-Նեան երեկ ճանապարհ ընկաւ դէպի արտասահման։ Ներքին գործերի մինիստրը շրջաբերականով առաջադրում է նահանգապետներին ուշադրութիւն դարձնել, որ այլակրօնների թաղման հանդէսներում չը թոյլ տրվի պսակների և այլ նշանների տանելը, որոնք չունեն եկեղեցական և պետական պաշտօնական նշանակութիւն։ Բայց ինչ որ վերաբերում է դագաղների զարդարելուն այլակրօն տաճարների ներսում, այդ մասին ուշադրութիւն դարձնելը կախված է պատկանեալ հոգևոր իշխանութիւնից։ «Journal de St. Petersbourg» ասում է. «Եթէ իշխան Ալէքսանդր յոյս ունէր, որ իր վերջին պահանջները համակրութիւն կը գտնեն, և Յունաստանի գործողութեան եղանակի պատճառով Եւրոպան աւելի զիջող կը գտնայ,—նա սխալվեց իր հաշիւների մէջ։ Բոլոր պետութիւնները անհրաժեշտ են համարում անսպասման կերպով վաւերացնել Բ. Դրան կողմից առաջարկած համաձայնութիւնը, որով իր առաջվայ այժն է պահում այն կէտը, թէ Արևելեան Ռումելիայի գեներալ նահանգապետի լիազորութիւնները պէտք է վերանորոգվեն ամեն հինգ տարի։»

ԲԵԼԳՐԱԴ, 7 մարտի։ Լուրերին նայելով, գարաչանին վերջնականապէս վճռեց հրաժարական տալ։

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՊՐԻԼՈՒԿԻ. Խ. Պ. Դուք հարցնում էք թէ որտեղ կարող էք ստանալ Գամառ-Քատիպայի բանաստեղծութիւնները, որքան արժէ գիրքը և նոյնպէս «Հայկական նօտայով շարադրված ժամագիրք», հանդերձ պատարագի արարողութեամբ։ Դիմեցէք Тифлисъ, въ Центральную книжную торговлю.

ՆԱԽԻՋԵՒԱՆ. Մ. Ա. Կարող էք ստանալ Մ. Փորթուգալեանի «Հայ դիւցազնուհի մը» գրքոյկը ուղղակի դիմելով հեղինակին Մարսէյլ (Ֆրանսիա) հետեւեալ հասցէով. Marseille (France) M. Portoukalian, redacteur du journal «Armenia». Գրքոյկը արժէ 50 սանտիմ, ուրեմն նամակի մէջ կարող էք ներփակել երեք հատ 7 կոպէկանոց ռուսաց փօստային մարկա։

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Խ. Զ. Ձեր ուղարկած 10 բուբլ ստացանք։ Կուղարկենք «Մշակը» Բէլգիայի Լիէժ քաղաքը ձեր տուած հասցէով։ Միայն կուղարկենք № 10-ից, քանի որ յունվարի համարները սպառված են։

ԱՐԴԱԲԻԼ. Ռ. Հ. Ձեր յօդուածը ստացանք։ Տպեցինք։ Եթէ ուզում էք ձեր հայրենակցուն նամակ գրել, կարող էք ուղղակի գրել «Մշակի» խմբագրութեան անունով, պարոնին հասցնելու համար։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՉԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ առևտրական հաշուարարութիւնները առանց ուսուցչի օգնութեանը ուսումնասիրելու համար։

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

վաճառվում է կենտ. գրավաճառանոցում, եղբարց Ծովիանովների բանկային դրասենեակում և հեղինակի մօտ. Тифлисъ, Лабораторная, № 11: Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցէով՝ С. П. Мануэльянцу.

Գինն է ամեն տեղ 2 բուբլի։

7—30

ՄԻ ՆՇԱՆԱՒՈՐ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

Որտեղում է ամեն տեսակ հեշտ կերպով ծախվող արդիւնքների կոմիսիոնական վաճառման համար, ամեն դասակարգի անձանց։ Փոքր պարապմունքի հետ նշանաւոր եկամուտ։ Դիմել հետեւեալ տառերով. В. Д. К. въ контору объявл. Райхмана и Френдлера Варшава.

1—1

ԿՕՓԷ ՄՕԿԿՕ

Ս. ՍԻՈՒ և ԸՆԿ.

(Ц. 4907) 2—50 (2)

Ստացել եմ ֆրանսիական նշանաւոր գործարանից, գիտնական Պաստէօրի սիստեմով պատրաստված, ցէլիւլէր շերամի սերմ. Ծախում եմ իւրաքանչիւր զօլօտնիկ մէկ բուբլիով։ Մի և նոյն տեղում վաճառվում է բոլորովին նոր Նաշէի, (Nachet) սիստէմի, 500 անգամ մեծացնող խոշորացոյց իր բոլոր պարագաներով։ Ցանկացողները թող դիմեն—Լերիսէ, Թիֆլիս, Նագորնայա փողոց, № 11 Փրիդոնովի տուն Սօլալակում։

2—3

ԹՈՅԼՏԻՒՈՒԹԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Էլէկսիր-Melange. Մազերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելու թափվելուց։ Գինը 2 ր. սրուակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։

Բալզամ—Eugénie. դանդաղ և պակի փունջի ծաղիկներից, երեսին, շլենքին և ձեռքերին քնքշութիւն և փափկութիւն, նոյնպէս և մարմարիոնի սպիտակութիւն տալու համար, շուշանի և վարդի անուշահոտութեամբ, նոյնպէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու։ Գինը 1 ր. 75 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով։

Կարմրադեղ—Eugénie. հեղուկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ տրվում երեսի քրտինքից։ Առաջարկվում է մանաւանդ թատրօնների և պարահանդէսների համար։ Գինը 1 ր. 50 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։

Այդ բոլոր երեք կոսմէտիական արդիւնքները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պարունակում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր։

Բերթա Ռիս.

ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ ՊՕՄԱԴ

իսկական «Pasta Eugénie», գերազանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անախորժ երևոյթների դէմ։ Տալիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և գեղեցկութիւն։ Գինը մի սրուակի համար 1 ր. 60 կ.

Քինին-գլիցերինեան պօմադ պերուական բալզամից, մազերը սնդացնելու, խտացնելու և մեծացնելու համար։ Գ. 2 ր. սրուակի համար։

Ձեռքերի պօմադ։ Գինը սրուակի համար 1 ր. 30 կ.։ Իւրաքանչիւր սրուակի վրա գտնվում է պաշտպանողական դրոշմ, մի «հրեշտակ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugenie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի, վրձինով 1 ր. 50 կ., առանց վրձինի 1 ր. 20 կ.

Մազերի ներկը երեք գոյնի. սև, շագանակագոյն և բաց-շէկ. Գ. արկղիկի 3 ր. Ներկը «Բիս-Գուտմանի» գործարանի։

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում Վ. Դրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լօնդօն» հեւրանոցի տակ, Զուբալովի տանը։

14—100.

Дозволено цензурою, Тифлисъ 7-го Марта 1886 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская у., д. каз.